Նկարչական այս համաձայնութիւն մէջ եւ այս հասկացողութեամբ է, որ երկու ամուսիններուն միջեւ տեղի կ'ունենայ գրականութիւնը նկարչութեան հակադրող կամ երկուքին ամաւելութիւնները բաղդասող խօսակցութիւնը («Վերջալոյսներ»ի Զ. տեսարանին մէջ): Բեմադրուած երկուքին միջեւ մրցակցութիւն մըն է արդէն իսկ, ուր գրող կ'ինքն կը խոստովանի որ լիարժեք ըլլալ նկարիչ, եւ ուրեմն (ինչ որ նուազ բացայայտ է, բայց լիարժեք դասկերի հետեւեալ) գրաւել այրին դիրքը: «Կ'ուզէի նկարիչ ըլլալ..., կ'ուզէի նաեւ երեւոյթի սեւութեան կամ մարմարոյի ճեմակութեան մէջ սեւեռել լաւիստական գիծեր, կ'ուզէի գոյներու հետեւանալ... կարկառել Մարդկութիւնը» (44): Սկիւսարի վերջալոյսները այդ կը դասակարգեն, այդ կը դասարարեն: Եւ ուրեմն «Սկիւսարի վերջալոյսներ»ն ալ կը գրուի միմիայն ըսելով համար որ լիարժեք գրուէին անոնք, այլ լիարժեք է նկարուէին: Խօսակցութեան առանցքը սակայն այն է, որ երկուքին միջեւ (գրականութեան եւ նկարչութեան) հաղորդակցութիւն չկայ: Բայց ըսողը նկարիչն է ու միակ օրինակը զոր կու տայ իմք այն է, որ գրողները չեն կրնար հասկնալ ու իրենց բառերով վերարտարել նկարչութեան հետադարձութիւնը: Ինչ որ չի դարձեցներ բնաւ, չի նուազեցներ իսկ, մրցակցութեան մթնոլորտը: Անշուշտ այս կտորին մէջ մրցակցութեան հարցը տարական չէ ու կարելի է զայն դիտարկել անտեսել: Հետեւեալ միայն լիարժեք երեւի անոր առաջնահերթութիւնը Զառէլ Եսայեանի գրական արտարութեան մէջ: Գրաւարկը հոս «գեղեցկութիւն»ն է, իսկ գեղեցկութեան մասին այրն է որ կը խօսի, որոնք նկարիչ: «Ամէն գեղեցիկ բան չի նկարուիր: Բնավայր մը ուրիշ բան է: Կէս մը փլած դաս մը անելի նկարչավայել է քան քաղաքի տեսարան մը...»: Կարմիր տուն մը կամ հին փողոց մը, կողակներ, եւ այլն, անհամեմատել անելի գեղեցիկ լիարժեք ըլլալին նկարչութեան մէջ» (քան թէ քաղաքի տեսարան մը) (45): Իսկ գրականութեան մէջ: Ահաւասիկ մայրամուտի նկարագրութիւն մը եւս, ուր կը տարբերէ նկարչական միջոցներու եւ ոճերու հետ մրցակցութիւնը. «... Հեռուէն ծովի կաթոյն գիծ մը անդին քաղաքին սիւնէքը մանիւշակագոյն եւ կաթոնակ կ'ուրուագծուի զմեքներու կողմէններով. միմարէներ եւ նոճիներ անհամար կը սլանան...: Գերազանցաւոր վրդովիչ բան մը կայ գիծերու եւ գոյներու մէջ, որոնց ամբողջութիւնը տեսակ մը անշուշտային arabesque մը կը կազմէ...» (31): Այնքան տարական է նկարչական յղումը Եսայեանի մօտին մէջ որ անմիջապէս ետքը բնագրական նկարչութեան ոսկի ֆոնին մասին կը խօսուի: «Անոր կախարհիչ գեղեցկութիւնը դրոշմուած էր իրենց միտքի մօտերուն մէջ»: «Անոր» ըսելով, կ'ուզէ ըսել «հորիզոնի ոսկի»ին, որ վերջալոյսին՝ կը տարածուի ու կ'ընդլայնի: Նկարչութիւնը եւ բնութեան գեղեցկութիւնը կը փոխարինեն իրենց յասկանիւթները:

Շատ հասարակ, որովհետեւ բացայայտ, նկատողութիւն մը լիարժեք, գոյներու եւ նկարչութեան տուրջ այստեղ ըսուածը, եթէ նկարչութիւնը գոյներով կազմակերպող (եւ գրողին ուղեղը խճողող) հակադրութիւններու, հակամարտութիւններու, մրցակցութիւններու (այր/կին, նկարիչ/գրող, մէկը կամ միւրը, կամ բոլորը փոխմի փոխմի) բեւեռներէն մին չըլլար:

[...] Եւ հիմա՝ կարճ ակնարկ մը ախտաւորի բաժնին, որ չափազանց գունագեղ է, ու քիչ մըն ալ միտքով: Ահաւասիկ «Ցաւին հետեւանք», ուր կ'ինքն մը կը դասէ իր զգացածը վիրաբուժական գործողութեան մը ընթացքին, ըսելով թէ «ինչ որ միտք կենդանի լիարժեք մնայ հոգւոյ մէջ այն ախտաւոր հաճոյն է որ յանկարծ թիւեցաւ ցաւին մէջէն» (141), նկարագրելով ուրեմն տեսակ մը սիրահարութիւն դէպի վիրաբույժը, քանի որ «անկախ իմ տես դարձած էր, իմ բացարձակ տես» ու «ինքնամոռացումի անյաղաքիւրեղի զգացում մը զիս կը հղատակեցներ անոր» (143): Իսկական սիրահարութեան մը կը տարբերի այս մէկը միայն այն չափով որ բժիշկը հիւանդ մարմնի հետ գործ ունէր: «Բայց այդ, թերեւս զիմք լիարժեք սիրտի յիմարաբար, եթէ անկախ մարդաստանի մը լիարժեք դասակարգ միտք ըլլար իմ առողջ միտք մէջ» (145): Ահաւասիկ

«Ախսաւոր հոգիներ» կարճ դասնում, ուր նորէն խօսքը «ախսաւոր հեռանք»-ին մասին է, հիւանդ կնոջ զառանցանքին ի լուր. «Ես եղունգներովս լիքի բանայի վերս ուղիւնքի անկէ արիւնիս մինչեւ վերջին կաթիլը հոսէր եւ երկարօրէն զգայի այն գաղջ գգուանքը՝ ինչի ու զառանցանքի գինովութեան մէջ» (121): Հոս բացայայտօրէն միախառնուած հեռանքի ու արիւնի ցնոր մըն է արայայտուածը, որ կ'ըսէ կնոջ բացարձակապէս «սիրադէմութիւն» ցանկութիւնը: Ահաւասիկ վերջապէս «Կմախքը» դասնում, ուր աղջիկ մը իր մեռած սիրահարին կմախքը կը դադէ իր ուսանողուհիի լոգիկ սենեակին մէջ, վարագոյրի մը ետին:

Յնորադասկերի գրառումով՝ սիրոյ եւ արիւնի, սիրոյ եւ մահուան, սիրոյ եւ սիրադէմութեան հասարակ դասնութիւն մըն է անուրիս դասնում: Հասարակ բայց ցնցիչ: Քաջութիւն կ'ուզէր, կ'ենթադրէր, 1905ի շուրջ, լոյսակաւ մամուլին մէջ այս բաները գրելու համար: Կամ ընդհակառակը արդեօք որո՞ւ միամտութիւն մը: Քաջութիւն ըլլայ կամ միամտութիւն, տղաւորիչ է երեւոյթը, ու մեզ բաւական կը հեռացնէ Պոլսոյ ընթացիկ կնոջական գրականութեան վերագրուած շղարհներէն, զգայնութենէն եւ վարդաշրային ռոմանթիզմէն: Կիմն է որ կ'արձանագրուի հոս, կիմ-գրութիւն մը արտադրելով:

Կիմ-գրութիւն: Կա՞յ այդպիսի բան մը: Ի՞նչ կրնայ նշանակել: Արդեօք այն գրութիւնն է որ կ'արտադրուի կնոջ մը կողմէ, իր իւրայատկութիւններով: Իսկ իրապէս կամ այդպիսի իւրայատկութիւններ: Կամ ընդհակառակը՝ այն գրութիւնն է որ կ'արտադրուի ֆեմինիզմի գիտակցի կամ վերակազմելի սկզբունքներով: Եւ վերջապէս ի՞նչ կը նշանակէ «կիմ-գրութիւն»: Որ գրութիւնը ընդհանրապէս ունի ճշմարտութիւն մը որ կնոջական է: Կամ ընդհակառակը, ըլլալով կնոջական, չունի ո՛չ մէկ ճշմարտութիւն: Այս մասին քննարկ մը նախադասութեան նկատմամբ եմ:

ա) Չաղէլ Եսայեան «կնոջական հարցեր»-ու շուրջ յօդուածաւարտ գրած է առնուազն երկու առիթով, մէկը Պոլսոյ *Ծաղիկ* թերթին մէջ, 1903-04ին, Շամսաննեանի շրջանին, միւսը Նիւ Եորկի *Արագած* թերթին մէջ, 1911ին: Ուրիշ շարքեր ալ կան, նուազ նշանակալից: Քիչ թէ շատ ամբողջական մասնագիտութիւնը տրուած է ֆրանսերէն լեզուով Շուշիկ Տասնամեակեանի *L'Univers lumineux de Zabel Essayan* գիրքին մէջ: Ասոր հիման վրայ Եսայեան երբեմն կը զինուորագրուի ֆեմինիզմի դասին: Եւ ինչ որ Փարիզեան տարիներուն՝ կաթի մէջ էր իմ ֆեմինիսթ շրջանակներուն հետ: Բարեկամացած էր Մարիա Շելիկային հետ, Ֆրանսայի մէջ շարժումին լեւ ծագումով ռաիվիւրներէն մէկը: 1908ին, երբ համերաժխութեան հովերէն տարուած՝ կը խորհէր որ կարելի լիքի ըլլայ խաղաղութեան ի նպաստ աշխատիլ եւ ըստ այնմ կիմներու «լիկա» մը ստեղծել, Շելիկային կողմէ ստեղծուած «կիմներու դաշնակցութեան» օրինակին կը հետեւէր (*Alliance Universelle des Femmes pour la paix par l'éducation*, Կիմներու միջազգային դաշնակցութիւն դաստիարակութեամբ խաղաղութիւն յառաջացնելու ի նպաստ), եւ իր ամուսինէն կը խնդրէր որ այցելէ Մարիա Շելիկային, անկէ կազմակերպութեան կանոնագիրը վերցնելու եւ իրեն հասցնելու համար, աւելցնելով՝ «Մեր միակ նպատակը լիքի ըլլայ համերաժխութիւնը դադարէր երկիրը բաղկացնող այլ եւ այլ ազգերուն մէջ: Կիմներու միջոցով [ասոնք] կրնան իրենց շրջանակին եւ իրենց տղոց դաստիարակութեան մէջ մեծ ազդեցութիւն ունենալ»⁵: Չմեծ երկարէր: Ասոնք քիչ թէ շատ ծանօթ երեւոյթներ են, որոնք կը վերաբերին Եսայեանի հրապարակագրական եւ քաղաքական գործունեութեան, բայց որոնք շատ աղետ չունին «կիմ-գրութիւն» կոչածին հետ: Պէտք է նշանել որ բազմաթիւ առիթներով Եսայեան ֆեմինիզմի դէմ արայայտուած է շատ բացայայտօրէն, առնուազն շեշտելով թէ իմը ֆեմինիսթ չէ: Այդ առիթներէն մէկը կը տրուի իրեն *Վերջալոյսներ*ի մէջ, բարեկամին հետ խօսակցութեան ընթացքին. «Բարեկամս, զիտես որ բնաւ ֆեմինիսթ չեմ եւ բնաւ փոյթ չեմ թէ իմ ուղեղս իր տեսակին մէջ գերազանց է այր մարդուն ուղեղէն թէ ոչ» (37): Կ'ընդունիմ որ համագիրը վիճակաւ է: Կ'ընդունիմ նաեւ որ խօսքը ֆեմինիզմի ըստին է («... իմ ուղեղիս որակը ֆեմինէլ աւելի կ'ընտրէր երջանիկ ստորակայութեան մը մէջ աղիւլ եթէ ասիկա ինծի թոյլ կու տայ սխալելի եւ հոսաւէ խառնելի մը բուրմունքը եւ հեղուկը ներմշակելով աչքերս դարձնել սա աղուոր բաներուն վրայ»), բայց ֆեմինիզմի ըստին նկատմութիւնը իր կարգին իրարու կը կապէ բնութեան գեղեցկութեան վրայ դրսի նկարչական հայեացքը (այսինքն՝ արուեստի հմարաւորութեան մէկ երեսակը) եւ «կնոթիւն»ը: Այնպէս որ ֆեմինիզմին ետեւ՝ խոր լրջութիւն մը կայ նաեւ ըստածին մէջ: Ամմիջապէս ետքը, այլեւս որեւէ ծաղրանք զերծ հաստուած մըն ալ կու գայ, որ կ'ըսէ. «Կը կարծես որ եթէ ֆեմինիստները իրաւ խելացի ըլլային, այդ իրաւունքը որ ունէին ձեռքէ չէին հաներ» (անդ):

Ֆեմինիզմը հոս կը խծբծուի իր լոգոսական հանգամանքին լոգոսականով: «Իմաստակներ» կը կոչուին ֆեմինիստները: Արուեստ եւ ֆեմինիզմ չեն կրնար համընկնիլ: Չափել Եսայեանն է ըսողը, կամ իր կնոջական կերպարին ըսել տողը: Իսկ եթէ կարծուի որ երիտասարդական խակութեան արդիւնք են այս տարօրինակ յայտարարութիւնները, ընթերցողը կը յղեն 1979ին Սովետական գրականութիւն ամսաթերթին մէջ տրուած «Ինքնակենսագրութեան», ուր կը կարդանք ֆեմինիզմի նկատմամբ նոյն մերժողական կեցուածքը, այս անգամ անուշտ տարբեր լոյսով ներկայացուած: Եթէ կին-գրութիւնը ընթերցելի է Չափել Եսայեանի գրառումով, լոյսի ըլլայ հետեւաբար ֆեմինիզմն *անկախ*:

բ) Կայ ուրիշ տարագրւած, այս անգամ անկախ ուղղակի Եսայեանի գրականութեան, եւ այդ գրականութեան մէջ՝ ցանկութեան կառոյցի գրառումին առնչուած: 1910ի շուրջ Պոլսոյ մէջ Տիգրան Կամսարականը մեջեջ ելած էր իր բարեկամի՝ Շիրվանզադէի գործին նուիրուած հասոյ մը գոյացնելու, որոյն արեւմտահայ գրողներու յարգանքի տուրք դէպի արեւելահայ համրածանօթ գրագէտը: Հասոյը լոյս տեսաւ 1911ին: Մէջը ուսումնասիրութիւններ ունին ի միջի բազում այլոց Տիգրան Զրաբեան եւ Չափել Եսայեան: Փակագծի մէջ ըսուած՝ լոյս տեսնողովորդ որ գիրքին մէջ տրուած յօդուածներն ու նկատողութիւնները յաճախ գոհացուցիչ չեն որովհետեւ չեն հիմնուած Շիրվանզադէի լծան գործին ծանօթութեան վրայ: Օրինակ երկուքն ալ, եւ Զրաբեան, եւ Եսայեան, կը վերլուծեն գրագէտին փառ տարի առաջ գրած ու հրատարակած գրքի մը մէկ լոյսնուածքը միայն: Եսայեանին կարճ վերլուծումի առարկան Շիրվանզադէի «Օրորոյ Լիզա» անունով լոյսնուածքն է: Այդ առիթով կ'անդրադառնայ յանկարծ (գրեթէ անտարբեր ընդհանրացումով մը) կնոջական ցանկութեան, որուն մասին կ'ըսէ հետեւեալը.

Այդ տեղագրին եւ անհանգիստ փնտռումը անկախ գործագրին, անկախ միայն խորհրդով լոյսնուած ուժին, այդ խելայեղ, անգիտակցից, բնագոյական հակումը դէպի անձանաչելի ուժը, դէպի հոյակապեցնող եւ նոյնիսկ բռնապետական գերազանցութիւնը կայ ամէն կնոջ մէջ:

Արդումանեան, Չափել Եսայեանի մասին իր գրքին մէջ կը մեջբերէ այս տողերը, հասկնալի լոյսնուածքով մը, քանի որ անոնք ըստ իրեն փաստն են որ «նա հազուադէպ խորաթափանցութեամբ է կնոջ հոգեբանութիւնը տալիս»⁸: Իրապէս ա՛յդ է կնոջ հոգեբանութեան հիմունքը, տիրապետելու ցանկութիւնն է: Իրականութեան մէջ Եսայեանին ըսածը հոս չի վերջանար: Յօդուածը շատ անկախ դաժան բաներ կ'ըսէ: Հոս կ'ուզեն միայն որ յսակ ըլլայ հետեւեալը. խօսքը կնոջական ցանկութեան մասին է, այդ ցանկութեան բնոյթին: Այդ «հակում»ը կնոջական հակումն է եւ այդ «անձանաչելի ուժ»ը որուն մասին խօսքը կ'ընէ հեղինակը «այրական» լոյսնուածքին տակ ներկայացող ուժն է: Ցանկութիւնը կ'անկախ է ուրեմն գերազանցութիւն մը, ու իրականութեան մէջ՝ կը ստեղծէ զայն: Ցանկութեան էութենէն կը բխի այդ երեւակայութեան, եւ ուրեմն երեւակայական, գերազանցութիւնը: Եզրակացնենք առժամապէս՝ կինը կը ցանկալի երեւակայականը: Ընթերցողը թերեւս սխառնայ այն տրամադրութիւնը որ այդ եզրակացութիւնը կ'երթայ մէկ քայլ անդին Եսայեանի ըսածէն: Իրականութեան մէջ՝ ա՛յդ ալ կ'ըսէ իմը բացայայտէն եւ տարբեր լոյսնուածքինը կ'ուզեն ուրիշ առիթի ձգել: Սխառնելով Եսայեանի գրքին տակ այն է, որ ցանկութեան եւ հակումին առարկայ երեւակայականը «հոյակապեցնող» լոյսնուածքը ըլլայ եւ նոյնիսկ «բռնապետական» կամ լաւ եւս՝ բռնասիրական (Եսայեան մտնի մէջ ունի աղաքիւղաբար ֆրանսերէն *despotique* կամ *tyrannique* բառերը): Ամբողջ հարցը կնոջական ցանկութեան մասին այս ընդհանրացումը կարենալ հաշտեցնելն է ֆեմինիզմի հետ, Եսայեանի իսկ ֆեմինիզմին հետ: Կամ ալ լոյսնուածքն որ (ինչպէս կ'ըսէի վերը կին-գրութեան մասին) կնոջական ցանկութեան կառոյցն ալ ընթերցելի է լոյսնուածքով ֆեմինիզմն *անկախ*: [...]

3 Մրցումը

Եւ հիմա, այո, խոստացուած եւ ստացուած միայն՝ մրցակցութիւնը: 2009ին լոյս տեսած հասոյին սկիզբը դրուած են երկու կտոր: Մէկը՝ «Սկիւտարի վերջալոյսներ»ը, միւսը՝ «Նոճինեւուն մէջ» վերնագրով արձակ բանաստեղծութիւն մը, գրուած 1907ին, ու զետեղուած առաջինէն անմիջապէս ետք, որովհետեւ (կ'ըսէ գրքին վերջաւորութեան դրուած տեղեկութիւնը) «շատ մը

կէտեցնել... կը յիշեցնէ «Սկիւսարի վերջալոյսներ»ը, կը թուի նոյնիսկ անկէ անջատուած էջ մը»։ Իսկ յառաջաբանին մէջ այս երկուքին մասին Պըլստեան կ'ըսէ. «Կը զարգանան արձակ ֆերուածի ծիրին մէջ եւ կը թուին ուղղակի գալ Ինսրայի «Ներաշխարհի ոլորտէն», եւ քանի որ այս նշումը կրնայ զարմանալի թուիլ Եսայեանի վիճակաւ-դասնողական ոճին միայն ծանօթ ընթերցողին, կ'աւելցնէ հետեւեալը. «Չրաքեանի գործին ծանօթութիւնը ակնյայտ է Վերծին Չրաքեանի ընկերուի» Չաղէլին մօտ, որ շուտով կեղծ հանճարի երգիծական դիմակով անցնէ Տաճառ Չարքեանի արուեստագէտ նախասիրին» (12)։ Վերջին ակնարկութիւնը կ'երթայ անուշ Եսայեանի *Կեղծ հանճարներ* վէրսին, որուն մէջ Տիրան Չրաքեան բեմադրուած է նուազագոյն անդրփոխանցումով, անունէն սկսեալ։ Այս չափազանց հետաքրքրական բայց շատ արագ նշումները կ'արժէ փշ մը զարգացնել։ Ուրեմն յիշեցնենք նախ որ *Կեղծ հանճարները* սկսած է լոյս տեսնել թերթին ձեռքով *Արեւելեան մամուլ* հանդէսին մէջ, «Վերջալոյսներ»ը վերջանալէն ճիշդ երկու ամիս ետք, 6 Յուլիս 1905ին, հանդէսին թիւ 28էն սկսեալ, մինչդեռ «Վերջալոյսներ»ը լոյս տեսած էր ընդմիջումներով թիւ 9էն մինչեւ 24)։ Երկուքը հետեւաբար գրուած ու գոնէ մասամբ լոյս տեսած են Ինսրայի *Ներաշխարհի* լոյս ընծայումէն տարի մը առաջ։ Կա՞ն արդեօք յաւելեալ տեղեկութիւններ որ ինձ ծանօթ չեն, բայց Վերգիւնէին ու Չաղէլին ընկերուիներ ըլլալը զիստեմ *Սիլիքսարի դարձեցնելը*⁹։ Կար նաեւ անձնական ծանօթութիւն Չաղէլին եւ Տիրան Չրաքեանի միջեւ։ Նոյն *Սիլիքսարի Պարտէզներ*ին մէջ կը դասնուի ի հարկէ դէպք մը, երբ Ալեմսաղի գիւղագնացութեան՝ Չաղէլի ընտանիքին կ'ընկերակցին «երկու դեռահաս դասանիներ, 13-14 տարեկան, որոնք Պէրդէրեան վարժարանի աշակերտներ էին։ Անոնցմէ մէկն էր Թէոդիկ Լաթիֆնէան եւ միւսը՝ Տիրան Չրաքեան...», արտասանեցին Պէրդէրեանի եւ Դուրեանի ոտանաւորներ։ Ես անյազ հետաքրքրութեամբ կը լսէի եւ խօսէի, երբեմն բառեր, ինձ անսահման յուզումով կը դասաւորէին։ Հայրս երկու անգամ կրկնել տուաւ Պէրդէրեանի «Եղբայր եմք մենք»ը եւ յետոյ այդ դասանիներուն խօսեցաւ բանաստեղծութեան իմաստին մասին»¹⁰։ Յայտնի չէ թէ Փարիզի մէջ Չաղէլին ու Տիրան Չրաքեանը տեսնուած են, բայց անելի քան հաւանական է։ Մնաց որ Չրաքեանի կեցութիւնը ի Փարիզ շատ երկար չէ տեսած։ Հասած է ինն 1897ի յուլիս 16ին եւ սեղաններէն արդէն իսկ ժընել անցած, ուր մնացած է մինչեւ Եգիպտոս մեկնելը 1898ին։ *Ներաշխարհը* գրուած է յաջորդ երկու տարիներուն։ 1900ի հոկտ. 16ին, Չրաքեան կը հաղորդէր Սիփայէլ Կիւրճեանին. «Գիրս լմնցուցի այսօր։ Օհ, մեծ, մեծ ազատումը, զոր սակայն, վարժութեամբ, դեռ չեմ կրնար կոր չափել. գործին զաղափարը զիս այնքան նեղած էր որ կարծես թէ դեռ լմնցուցած չեմ զայն, մինչդեռ իրապէս, անհակառակելի կերպով լմնցաւ, այս առտու»¹¹։ Բայց գործը մնաց տարիներով անփոխ։ Լուրեր ու տարածայնութիւններ կը օրէին անոր մասին բայց գործը իմը չկար հրապարակին վրայ։ Չրաքեանի նամակներէն մէկուն համաձայն՝ գրախնդրութիւնը որոշ էջերու շուրջ առարկութիւններ ունէր¹²։ Բայց վերջին հաշուով զիրք լոյս տեսած է 1906ի Մարտին։ Ինչ որ կը նշանակէ թէ երբ Չաղէլ Եսայեան կը գրէր եւ «Վերջալոյսներ»ը, եւ «Կեղծ հանճարներ»ը, այսինքն՝ 1904ին կամ 1905ի սկիզբը, *Ներաշխարհը* գոյութիւն ունէր միմիայն որդէն ձեռագիր։ Չաղէլ Եսայեան եւ իր ամուսինը՝ Տիգրան Պոլիս գտնուած են 1903էն 1905։ Այդ տարիներուն՝ Տիրան Չրաքեան դասատուի եւ սնուցիչի դասօժաններով կ'աղբիւր, նախ Կալիփոլի, յետոյ՝ երկու տարի Մարկարա (Արսաւէս Յարութիւնեանի գիւղաբաղաւր), եւ վերջապէս Ասանա։ Վերծինը եւ իմը Պոլիս վերադարձած են 1904ի ամառը։ Իսկ ձեռագիրը այդքան ալ օրջագայութեան մէջ չէր քանի որ Չրաքեան անկէ օրինակ մը դրկած է իր ամենէն մօտիկ բարեկամին՝ Սիփայէլ Կիւրճեանին ոչ անելի վաղ քան 1903ի Փետրուարին։ Ուրեմն կարելի է երեւակայել որ Չաղէլ Եսայեան ձեռագիրը տեսած ու կարդացած է (առնուազն անկէ հասնուածներ կարդացած է) 1904-1905 տարեշրջանին, այսինքն այն իսկ ամիսներուն երբ «Վերջալոյսներ»ը կը գրուէին եւ ենթադրաբար նաեւ՝ *Կեղծ հանճարները*։ Կ'ըսենք «ենթադրաբար» որովհետեւ վերջինս կրնար ասկէ առաջ մասամբ գրուած ըլլալ եւ անոր վերջին մասն ալ (այն մէկը որ զիրով միայն լոյս տեսած է) անելի ուշ։ Իսկ թէ Եսայեան տեսած է ձեռագիրը, այդ մէկը չի վերցնէր ոչ մէկ կասկած, այնքան մեծ են *Ներաշխարհի* եւ «Վերջալոյսներ»ի միջեւ ընդհանուր եւ մասնակի համագիտութիւնները։ Պէտք է յստակ ըլլայ սակայն որ զիս հետաքրքրողը հոս գրական ազդեցութիւնները չեն, այլ գրականութիւնը որդէն մրցադաս։ Նոյն օրջանին՝ երկու գրողներ կրնան ուզել նոյն բանը, աշխատիլ նոյն ուղղութեամբ, հետեւաբար ըլլալ մրցակիցներ։ Աշխարհի գրականութիւնները շատ ունին այդպիսի դարազաններ։ Չրաքեան/Եսայեան մրցակցական յարաբերութիւնը անելի սուր հանգամանք ունի սակայն, որուն բոլոր տուեալները մեր տրամադրութեան տակ չեն։

Անցնիմք հանգիստություններու հակիրճ նկարագրութեան: Եսայեանի մօտ չկայ անուշ Ինքային յատուկ փոխաբերական տարրեր, «անեղութեան» գովը, բայց կան առաջին դեմքով զանազան տեսակներ, որոնք մասամբ զանազան բնոյթ ունին: Ոչ մէկ վիճակով զիջելու տարածքներուն ալ սակայն: Ամէն մէկ տեսարան իմեն իր մէջ կը տարւնակէ ամբողջին իմաստը, տարբեր «խորհրդապատկերներ»ով: Տեսարաններու իմաստային յագեցումն է երկու գործերուն ալ գլխաւոր յատկանիւշը: Բայց նաեւ երկու տարածքներուն՝ տեսարանը նկարագրական վերածելու, այսինքն՝ շարժումը անշարժացնելու, ինքնաբերական դարձնելու ձգտումը, որովհետեւ տարբեր սահմաններէն դուրս չելլել: Ամէն մէկ տարածք կ'ընէ գործին լման իմաստը: Բայց ինչ է ըլլայ տարածք: Տարածքաբանական կ'ըսուի ներառարհը: Այս անշարժ շարժումի ամենէն ակնհայտ օրինակներէն մէկն է Ինքային մօտ *Ներառարհի* Է. զուգահեռ արեւելեան տարածքներու շարժը, արեւելեան Քաղաքին գումարգեղ նկարագրութիւնը, ֆելլախներու աշխատանքին տարածքը, սակորներով գետեզերք իջնող աղբիկներու շարժումը նկարը, որմէ ահաւասիկ քանի մը տղերք:

Ա՛հ, թուի, իրականութիւն մեղանոյցները, կու գային անոնք, գետեզերք վրայ կ'երեւային, գազաթներուն վրայ թակոյկներ... իրենց աղուր հասակն սփռելով խաւարին շուրհի մը վեժով որ կը թողուր ցայտել իրենց դեմքին՝ սիկէ, ակնմոմէ դեմքերուն մեղանուշութեան, ու անոնց բոլոր ծիփոս առաջին՝ կակուղ տարածքին մէջ, բալ, ծիրանի, կապույտ ու միւս մոխրագոյն տարածքին՝ կուրծքներուն կուռ ու ժուլայուն դոնդողէն՝ սարսուռ, առաջ ազդերուն փայլերէն դողդոջուն ու հեւոտ ծալներով, զոր թուի ու թոյլ ձեռքով մը ցայլերուն վրայ կը ժողվէին կողմնակի, մինչդեռ ծիփները կը ծիփփային անոնց փոշոս ու տարածք բոկութիւնը փայտայտելով... ու փոշին մէջ շոյս ու անձայն փայտփոխին կը նշուէր...¹³

Անուշ գումարգեղ նկարագրութիւնը, անշարժ շարժումը անհրաժեշտ են *Ներառարհի* մէջ, որովհետեւ զիրենք մէջ ծաւալած սկզբունքներուն համաձայն, «անեղութեան» ինչ է հակադրուի «կենսահայեցողութիւն»ը: Բայց կայ անելի տարգ՝ «արեւելասիրութիւն» մը, որ նոյնպէս առանցքներէն մէկը կը կազմէ Եսայեանի «Վերջալոյսներ»ին, ինչպէս յայտնի եղաւ վերը: Այդ «արեւելասիրութեան» շուրջ մինչեւ իսկ երկար ու տղաւորիչ խորհրդածութիւն մը կայ Ինքային մօտ, որ ինչ է ունի բացատրելու թէ ինչո՞ւ Պոլիսը ձգած՝ ստիպուած էր Արեւելք փնտռելու Եզիպտոսի մէջ, «վասնզի որքան ալ ծննդավայրս Սաւմոյն էր միայն՝ նոյնքան եւ միմարներու վսեմ Քաղաքը չէր կրնար ընծայել ջերմ ու շողողուն զգայութիւնը հարաւ ու Արեւելքին» (161): «Քանզի... Զարալը տայմանն է Արեւելքին» (162): Կարելի չէ հոս ինքայնական ամբողջ տեսաբանութիւնը բացատրել Արեւելքի մասին, բայց մէկ բանաձեւով կարելի է ըսել որ Զարալը տայմանն է Արեւելքին ճիշդ այն ձեւով որ տարածքաբանական տայմանն է ներառարհին, ու հետեւաբար ինչ է երեւի, փայլի, փայլատակի գոյութեան մէջ: Այդ իմաստով՝ Եզիպտոսը «տարածքաբանական Արեւելք» մըն է, ինչպէս փոխադարձաբար «Արեւելքը շրջագծում մը, ճշդում մ'է երազային տարածքաբանական»¹⁴ : Իրականութեան մէջ՝ ամբողջ հաստատուն որուն կը հետեւին սա տակաւ «արեւելասիրութեան» յետին նշանակութիւնը կը փնտռէ կամ կ'արտայայտէ: Չայն կը փնտռէ ու կ'արտայայտէ ինքնայնական մօտեցումով, բայց այդ արեւելասիրութիւնը չի դադիր ըլլալէ նոյն այն *orientalisme* որուն մասին խօսելը կ'ըլլար սկիզբը, ամբողջովին յատուկ ԺԺ. դարու մտայնութեան: «Պայծառ երկինքներու շուրհաճ հեռակեցողութիւնը չէ՞ որ կը նշանակէ Արեւելք մոգաբանական, անոնց համար որ Արեւմուտքի երկնոս ու կասաղի կեանքը կը փամառեն, Արեւմուտքի մեծ ու դառն փառքներու կեանքէն տարածքաբան են իրել անհասկնալի յոյսերուն մը, սահմանաւորուն մը...»¹⁵ : Կը յիշէ՞ ընթերցողը Եսայեանի տղը, սկիզբը մասամբ մէջբերուած. «Ինչպէ՞ս մարտնչուած էր այլեւս մեր մէջէն անսահման իշխանութիւնը մարախաղաղ օրերուն, ճոյն եւ անձառագայթ օրերուն, երբ մեր իշխան հոգիներուն մէջէն կու լային արեւին կարօքը, մեր սփռնելի եւ ոսկեզօծ Արեւելքին կարօքը» (18): Իսկ Ինքային կրկին՝ «եւ որ իրենց մէջ արդիւն ինքնազգացում, արդիւն իրապէս տարածքաբանական աւելին վերափոխումը կը զգան Արեւելքի լուսնէն կլիմային մէջ»¹⁶ : Արեւմուտքի մէջ արեւի տակաւ կը գոնջացնէ հոգիները: Արեւելքի մէջ յորդութիւն մը կայ, որուն որպէս գաղափար կը վերընծայուին, կ'ըսէ Ինքային, «արեւելեան տարածքաբանական բոլոր տարրերն ինչպէս նաեւ արեւելասիրութեան գեղագիտութիւնը...»¹⁷ : Երկու տարածքներուն ալ, Եսայեանի ինչպէս Ինքային, արուեստը այդ ներառարհի դարձող տարածքաբանական յորդութեան, գեղեցկութեան մէջ

է: Այդ իմաստով, Ինճրայի ըսածին աւելի կարճ ձեւը այն է, որ գեղագիտութիւնը կրնայ միայն արեւելասփիւք ըլլալ: Գեղագիտութիւնը արեւելասփիւքութիւն է: Արուեստը վերադարձ մըն է: Այդ է Պասճառը որ Եսայեանի գործերուն մէջ այդքան յաճախ վերադարձ մը կայ, վերադարձ մը դէմի Պոլիս: Այդ հանգամանքը չի բացատրուիր միայն կենսագրական տուեալներով, կամ մանկութեան ու Պասճառեան յիշատակներու գերակշռութեամբ: Ասոնց ետին կանգնող փիլիսոփայութիւնը այն է, որ արուեստը վերադարձ մը կ'ենթադրէ դէմի Արեւել: Ինճրայի տարածախառն ալ այդ Պասճառով «արձախարհ»ը չէ միայն, հակադրուած «մերձախարհ»ի մը: Արեւելի կենսահայեցողութեան յորդորութիւնն է արդէն իսկ, եւ բառին մէջ կը հնչէ բնականաբար ընթացիկ հայերէնի «տարածախարհիկ»ը: Տարածախարհը մերձախարհին վերընծայուած արձախարհն է, ախարհն է որդէս վերընծայում: ԺԹ. դարուն յասուկ արեւմտեան արեւելասփիւքութեան ինճրայական մեկնաբանութիւնն է այս մէկը, որուն արձագանգները կան նոյնութեամբ Զառէլ Եսայեանի մօտ: Ուրեմն արուեստը, իր էութեամբ, վերադարձ մըն է, այսինքն նաեւ՝ շարժում մը, սառած, կեցած շարժում մը: Երբ Եսայեան կը վրդովի օրինակ Պոլսոյ վարժապետներուն դէմ (որոնք բարձրադաս կը վիճաբանին), խորհելով հաւանաբար որ ինքն է վերջին անմեղը, Պասճառը այն է որ անոնք կ'անգիտանան արուեստը որդէս վերադարձ: Կ'աւորին Արեւելի մէջ բայց չեն «վերադառնալ» դէմի Արեւել: Եթէ բացատրութիւնը այդ չըլլար, անհանելի տիտի ըլլային ճահել գրագիտիկին փամառանքը իր ժամանակակիցներուն նկատմամբ: Արճայայտածը «անոնց մէջ աւորելու» գաղափարին Պասճառած սարսափն է (էջ 31՝ «Պէտք էր այլեւս անոնց մէջ աւորիլ, անոնց հետ շփման մէջ ըլլալ... ու մանաւանդ սփռուած ըլլալ կրելու աներեւակայելի տգեղութիւնը իրենց շարժումներուն...»): Որդէսգի չըլլայ շփացած եւ Եւրոպայէն շլացած աղջկան մը հակադրութիւնը, որդէս է ըլլայ «արեւելասփիւքութեան գեղագիտութիւն»ը: Այդ մարդիկը գեղեցկութենէն եւ ուրեմն՝ արուեստէն բան չեն հասկնար, մինչդեռ այն վայրը ուր կ'աւորին, ըլլալով Արեւել, արուեստի աղբիւրն իսկ է: «Արդեօք երէկ գիշերուան վարժապետները չէին տեսնար այս լուսաւոր երկինքը...» (35): Չեն տեսնար որովհետեւ չեն վերադառնար: Ասելութեամբ լեցուն են այդ Պասճառով:

Այսօր բնական կը համարեն «Վերջալոյսներ»ի եւ Ներախարհի ընդհանուր հանգիստութեան մասին: Կան սակայն բազմաթիւ մասնակի կէտեր որոնք ալ աւելի բացայայտ կ'ընեն համանմանութիւնը (եւ անուշտ՝ տարբերութիւնը): Երեք հաջորդական մեծ անոնցմէ՝ խորհրդանշական Պասկերը, Մոճիները, եկեղեցիին տեսարանը: Ահաւասիկ գոյներու եւ գիծերու ամբողջութիւնը (մայրամուտի տեսարան մըն է), որ «տեսակ մը առեղծոածային arabesque կը կազմէ, իբր թէ իրենց խորը խորհրդանշական մտածում մը ունենային ծածկուած» (31): Եսայեանի մօտ՝ ըսելու ձեւ մըն է միայն: Ինճրայի մօտ՝ փիլիսոփայութիւն մըն է: Բայց ի՞նչ փոյթ: Ըսելու ձեւը կը մասնէ ու կը մասնանշէ ամբողջ մթնոլորտ մը, կը յղէ ուրիշ գրողներու, կը բացայայտէ ժամանակաշրջանին ազդեցութիւնը: (Փակագծի մէջ որդէս է ըսել որ Եսայեանի անփութութիւնը հայերէնի նկատմամբ երբեմն վրդովեցուցիչ է: Դոս կրնար գործածել «դրասանգ» բառը, ի չգոյէ լուսազունի: Ինճրա ստեղծած է «արաբիիա», խաղալով ֆրանսերէնի հնչիւնին հետ եւ գործածելով հայերէնի հնարաւորութիւնները: Միեւնոյն ատեն՝ կը տեսնուի թէ ինչպէ՞ս երկուքին մօտ ալ միացած են խորհրդապաշտ մտածողութիւնը, լիովին կեղծ կամ լիովին ստանձնուած, եւ «արեւելասփիւքութիւն»ը:) Իսկ Մոճիները: «Քանի մը ֆայլ եւս եւ ահա կը տեսնենք գերեզմանոցի Մոճիները երեկոյեան այս ժամուն բոլորովին սեւ՝ որ խմբովին բուրգերու դէմ կը բարձրանան ոսկեզօծ երկնին մէջ: ... Մասնաւոր եւ մերձեցնակ սօսաւիւն մը ունին որ կը մըմնջէ գերեզմանաբարեւուն մէջերէն նուիրական աղօթքի մը դէմ» (32): Պէտք կայ ընդգծելու որ Մոճիներու աղօթքը, ինչպէս Մոճիներու եւ բուրգերու այս զուգահեռը, զուտ ինճրայական է: Ներախարհի մէջ ամէն շեղ են Մոճիները, իրենց բարձրաբերձ սլացմամբ, իրենց խաւարով, իրենց խաւաւով: Յառաջաբեմ կու գան միայն 5րդ գլուխի վերջաւորութեան, եկեղեցւոյ տեսարանին, Կիրակնուրբին եւ հօր կերպարին նուիրուած էջերէն ետ: «Դ՛ Մոճիներ. յամբար, ու մեղմիւ, թող գրաւուիմ ձեր մօտ մեծութեամբը. ձեր աղօթքին մօտ յաւերժութեամբը թող յափշտակուիմ, ժամերով, վասնզի երկար ատենէ ի վեր ալ չեմ կրնար աղօթել...: Բարձրացէ՛ք ձեր երկնաձիգ ամբարձման զօրութեամբը որ ձեզի կ'ամփոփէ դէմի գեմիթը..., եւ որ ձեր անվախճան աղօթողութիւնն է...: Դուք որ նիւթին, խաւարին վերիտեանալու բաղձախաւար ձգտումը կ'անձնաւորէ...»¹⁸: Այսպէս Մոճիները, ինչպէս բուրգերը, «անէապաշտութեան» վայրն են, անոր անձնացումը, խորհրդանշականացումը, եւ ինչպէս բուրգերը՝ «ամբար գերեզմանականութիւն» են:

Բայց ամենէն տղաւորիչը եկեղեցիի տեսարանն է իմնին: Կ'արժէ հոս տալի մը կենալ եւ ցոյց տալ *Ներաշխարհի* ներքին ճարտարապետութիւնը: Գիրքին ամէն մէկ գլուխը ի հարկէ կազմակերպուած է առնուազն երեք կամ չորս տարրերու միախառնումով. ա) նկարչական իմաստով՝ տեսարան մը (հոս՝ եկեղեցիէն ներս, Կիրակմոսի իրիկուն մը), բ) այդ տեսարանին յատուկ գեղանկարչական սկզբունք մը (հոս՝ *chiaroscuro*), որ կը համադաստախմբէ նաեւ կառավարող հռետորական դասկերակերտումին (հոս՝ խաւարէ բոցը), գ) անձնական վիճակ մը, քանի որ Ինսրայի մօտ ամէն նկարագրութիւն ունի մտայնական անձնականացուի ծայրագոյն կերպով (հոս՝ անձնական վիճակը մեռած հօր հետ հանդիպումին կը վերաբերի), եւ դ) փիլիսոփայական խորհրդածութիւն մը (հոս՝ լոյսին շուրջ մտնումը եւ լոյսին կրօնագիտական կամ կրօնափիլիսոփայական նշանակութիւնը): Անձնական վիճակը ընդհանրապէս մոտ է կը գործէ վիճակական եղանակով: Բայց մինչեւ իսկ այդ մոտէն դաստաստուած է: Հոս՝ ի՞նչ ձեւով: «Հայր գթած»ի շուրջ երկար մեմախօսութեամբ մը: Այդ մեմախօսութիւնը երբ իր աւարտին կը հասնի, կը կարդամք. «Ծերերէն մէկը ետեւը կը դառնայ, կը նայի. սոսկալի բան. հայրս է...»¹⁹: Այդտեղ կը սկսին այդ քանի մը անմոռանալի էջերը, «անընդհատ կը ծնէր զիս» կեդրոնական նախադասութեամբ, որոնց վերջաւորութեան գրուած է՝ «Չէ՞ մի որ մեռած հայրս իմ մէջս է, հայրս, որ Եկեղեցւոյն մէջ կու լար»²⁰: Չափէլ Եսայեանի «Վերջալոյսներ»ին մէջ եկեղեցիի տեսարանը եօթներորդ գլուխով կը բացուի (էջ 48-էն սկսեալ): Փարիզի մայր տաճարին առթած «միսքի մերգործութեան» յիշեցումէն ետք, ահաւասիկ Ս. Խաչը, առիթ՝ մանկական յուշերու վերազարթումին, բայց առիթ նաեւ՝ հեղինակին ֆրանսացիութիւնը ընդգծելու անգամ մը եւս: «Մեր եկեղեցին միակ տեղն է ուր Առաջնօրէն լուսոյի դէմ փառաբանութիւն մը լսելով... իմ գիմնա մերձաւոր եւ մէկ կը զգամ այս ցեղին հետ եւ հոգիիս խորէն կը ճանչնամ այս փափուկ եւ սակայն իրական ծայրը որ մեր նախահայրերէն մեզի աւանդուած է եւ ինծի մասնաւորապէս նուիրական եւ սիրելի է այդ ծայրը, ինծի որ անկէ դուրս այնքան օտար եմ շատ մը տեսակէտներով իմ համայնքին» (49): Երգեցողութեան նկարագրութիւնն ալ առիթը կ'ըլլայ բացատրելու որ մարդիկ խորանին առջեւ, դարաւոր աւանդութիւններ կրկնելու իրենց դերին մէջ, խորհրդանշաններու վերածուած են: Ճաղատ գլուխներուն հակիւն ալ կը տեսնենք, ինչպէս Ինսրայի մօտ, եւ... «Նոյն միջոցին ահա կը տեսնենք բազմաթիւ ծերունի մը, գլուխը կուրծքին, ճակատը գետնին յառած, որ ջերմեռանդութեամբ կ'աղօթէ. դասկառնելի դիմագիծ մը ունի իր արծուային փթովը եւ երկայն ձիւնի դէմ մօրմուկը, առաքելալի գլուխ մը դարձապէս... ու մէկէն կը ճանչնամ զինքը...» (51): Արարողութեան մը ընթացքին յանկած այս ճանաչումի դէմքը կը կրկնէ միւսը՝ Ինսրայի մը, կէս առ կէս: Չեն երկարեր: Եթէ մինչեւ հիմա ցոյց տուածներս որդէս հանգիստութիւն (դասկերներու ազուցումով յօրինումը, անշարժ շարժումը, արեւելասիրութեան գեղագիտութիւնը) կրնային նկատուիլ որդէս դարձ արդիւններ աշխարհապայտեցման զուգամիտութեան, այնքան բնական երեւոյթ ժամանակակիցներու մօտ, եթէ խորհրդանշական դասկերին հասարակութիւնը կու գայ իր հասարակ տեղի ըլլալէն, եթէ խորհրդին որ նոյնինքն ալ վերջին հաշուով՝ Պոլսոյ դաշտանկարին մաս կը կազմէին, եւ այս ամբողջը Չափէլին մօտ յատուկ ծանօթութիւն մը չ'ենթադրէր անտայնական այն աստիճանական անսիրտ *Ներաշխարհի*ն, այս վերջին (եկեղեցիի տեսարանին դարձած) հանգիստութիւնը սակայն ցոյց կու տայ որ Եսայեան Ինսրայի գործին մասին ունէր անելի քան թէ հարեանցի ու լսովի ծանօթութիւն մը:

Այս ամբողջը կը փաստէ միմիայն Ինսրայի գործին ազդեցութիւնը իր ժամանակակիցներուն մօտ, տղուէն իսկ առաջ: Մնացեալը կը դասկանի «անձկութեան» բնագաւառին²¹: «Անձկութիւն»ը ունի չէ հասկնալ հոգեբանական իմաստով: Գրեթէ էաբանական տուեալ մըն է, կամ գոյութեանական դաշտին մէկ տարրերակը: Կ'արձանագրուի գրականութեան մէջ, հոն է որ ընթերցանելի է: Ոչինչ գիտենք Չափէլ Եսայեանի եւ Տիրան Չափեանի յարաբերութեան մասին, «իրական» կեանքի մէջ (*Սիլիհսարի դարձգնեղի* վերջ յիշուած դրուագներէն անդին): Ամէն ինչ տեղի կ'ունենայ իրենց միջեւ գրուածքի մակարդակին: Եւ ներկայ դարազային՝ գրուածքը միայն «Վերջալոյսներ»ը չէ այլեւ անոր անմիջապէս հետեւող եւ նոյն օրջանին գրուած *Կեղծ հանձարներ* վեպը, որուն գլխաւոր «հերոս»ը կը կոչուի Տաճար Չարլէան:

Ի զուր եւ Չարլէան ու Չափեանը իրարմէ անկախ նկատուած լուրերով... հիմնականում հաւաքական բովանդակութիւն» ունեցող կերպարներ նկատուելու փորձերը²²: Ի դէպ «Վերջալոյսներ»ին մէջ տեսարան մը կայ, որ արդէն իսկ կը նախակարգաւորէ (եթէ կարե-

լի է այդդպես ըսել) գալիք վեղը: Ուսանողական Փարիզէն յիշատակ մըն է: Վեճ մը հասած է կռիւի աստիճանին, բերանները փրփրած են, թուփեր կը նետուին իրարու երեսին, գաւազաններ կը ճոճուին օդին մէջ: Բայց գաւազանները ո՛չ մէկուն կը դոյն: Խօսք է միայն եղածը, ճեղ մը չլանգող արար: Ազգային նկարագիր մը կ'ուզէ ընդգծել այդ ձեւով հեղինակը, ամփոփութիւն մը, իրականութեան մէջ չարձանագրուելու, արձանագրուիլ չկարենալու հիւանդութիւն մը: Վեղին մէջ ալ մասնանշուածը այդ ազգային հիւանդութիւնն է, Տաճաշին եւ միւս ուսանողներու կերպարներուն ընդմէջէն, ծաղրանկարային ձեւով: Բայց Եսայեան ասկէ շատ անդին կ'անցնի վեղին մէջ: Կը զանազանացնէ մեծամիտ ու շփոթուած արուեստագէտ մը, որ կը յոխորսայ իր համաճարով ու կը բաւարարուի իր վրայ շարժուած գովասանքով («Անանկ մարդիկը բացառութիւն են, ազգի մը մէջ երկու հաս կը լլայ կամ չ'ըլլար»²³), առանց երբեք գործ մը երեւան բերելու («Տաճաշ Չարքեան դեռ իր համաճարէլ երիտասարդի սիւլութիւնը կը ղոցնէր իր թաղին փողոցներուն եւ կամ համարային դարձներուն մէջ, ամէն մարդ գիտէր թէ սա տղան մեծ մարդ էր, իր թաղին, իր ազգին փառքն ու դարձանքը»²⁴): Եսայեանի նկարագրութեան բոլոր տուեալները, առանց բացառութեան կը յարմարին Չրաքեանին: Եղածը ծաղրանկարային վեղ մը չէ ուրեմն: Անձնատրութիւն մը ծիծաղելի դարձնելու միտող գիտակից ձեռնարկ մըն է: Տաճաշը նկարիչ է սկիզբը, բայց իր մեծամոլութենէն տարած՝ նկարչութիւնը բաւարար չի գտնէր իր հասնելու համար: Ի վերջոյ՝ նկարելը աշխատանք կը դառնար, հետեւաբար՝ համեստութիւն: Նկարիչը ղեկ է ընդունի նախ ապերկ ըլլալ, իր արհեստը սորվիլ: Տաճաշ չունի այդ համբերութիւնը, կ'անցնի գրականութեան: Գրականութիւնն է, որ «դիտել... ճանչցնէ մարդկութեան համայն իրաւունքներն այն գերագոյն, անհասանելի, անթափանցելի աշխարհը, որ իր հոգին էր, իր ետը, ամենակարեւորը զոր դիտելու ցուցադրէր նեարդ առ նեարդ, գորգորանքով, խնամքով, չմոռնալով անոր նուիրական խորհիւններէն ոչ մէկը, ոչ մէկ թրթռացում եւ ոչ մէկ երանգ եւ որուն հոյակապ շեղութեան դրոշմը դիտելու բանար միմիայն գրականութեան միջոցով ամփոփելու եւ լայնացնելու մարդկութեան»²⁵: Արդեօք Եսայեանի ընթերցողները չէին գիտէր որ Տիրան Չրաքեանին (որ այն ատեն տակաւին «Ինքս» չէր, քանի որ *Ներաշխարհը* լոյս չէր տեսած երբ այս տողերը կը գրուէին ու կը տպուէին) իր դասանութեանը մեծ ամպագայ խոստացուած էր նոյն ինքն Այվազովսկիին կողմէ: Դեմքը դաստիարակ է 1888ին, Պոլսոյ Պատրիարքարանին մէջ, ուր 13 տարեկան դասանին ներկայացուած է մեծահասակ նկարիչին իր ջրաներկերով: 1897ին երբ Փարիզ կ'անցնի, նոյնպէս նկարիչի համբաւով եւ յաւակնութիւններով է որ կը ներկայանայ Տիրան Չրաքեան: Այս բոլորը գիտնիք իր նամակներէն եւ ժամանակակիցներու վկայութիւններէն: Այդ օրերուն իր օրագրիկը կը հանէր որդեկ ծաղրանկարիչ, Պոլսոյ եւ Փարիզի թերթերուն աշխատակցելով: *Ներաշխարհը* մէջ իսկ կայ տեսարան մը, ուր բանաստեղծը օրագրիկը ամփոփելով համար յանձն առած է դասեր մը դնել, չնչին բան մը, որ սակայն կը ճնշէ իր վրայ. «... Ախտային վիճակի մը դէպքերուն կը խորհուի կոր որ այն դժգոյն դասերը անդաւաճող ղեկ է շինուի: ... Եւ ջլատ ամփոփութիւնս ի գործ կը ձգնի այն կողմը չնայիլ. անզգայի կերպով հեռանալ, ազատելու համար այդ դասերին լլկումէն, դասերին որուն չգոյութիւնը սղաւաղագին կը նայի հոգիս...: Տէր Աստուած, միթէ ես կ'ըմբռնեմ զքեզ. ինչ անհնարին իմաստութիւն էր որ ըրի՝ հաւանելով այդ անհնարին բանը ընելու»²⁶: Գիտնիք նոյնպէս որ 1897ին երբ ժողովուրդը կը դաստիարակուէր Ալեքսանդր Կիւրճեանին մօտ, Չրաքեան որդեկ նկարիչ կը խօսէր, միջոցով իսկ բացառապէս կերպով՝ որդեկ «արեւելասէր» նկարիչ. «Հիմա boîte à peinture մը ունիմ, paletteներ, 20 վրձին, 50է ատէլի ներկեր ու մանր մունր անհրաժեշտ իրեր, ու կ'ըմբռնեմ Եփրատի շրջանը, ինչպէս թիւրքերը նկարելով իմ ընթերցելի composition-ներու մէջ, ճոխ capital-ով մը վերադառնալու համար Եւրոպա...»²⁷: Յստակ է որ այդ թուականին՝ Չրաքեան իր աստիճանը կը նկատէր տակաւին նկարչութիւնը եւ ոչ թէ գրականութիւնը: Եւ նոյնքան յստակ է որ Չրաքեանի թիրախը այդ Չրաքեանն է, այն մէկը որ բաւական յարաշէնութիւն ցոյց չէ տուած իր այդ մէկ նմանակին հասնելու համար: Եւ ինչ է որ ցոյց չէ տուած, բայց փոխադրելով՝ դարձած է արդիական շրջանի մեծագոյն հայ բանաստեղծը, տեսակ մը Հայոց Արթուր Ռէմոն: Եզրակացութիւնը այն է, որ Եսայեանի Տաճաշը «հաւաքական բովանդակութիւն» չունի բացարձակապէս: Նոյն ինքն Տիրան Չրաքեանն է, Եսայեանի գրչին տակ՝ ծաղր ու ծանակի առարկայ դարձած: Վեղի վերջաւորութեան՝ Տաճաշի մասին տուած շեղեկութիւնն այն է որ Պոլիս վերադարձած է ան, ըլլալով համար թողական դրոշմի մը մէջ ուսուցիչ: Որքան տարածական, ճիշդ իր նախաշիջին դէպք: Տաճաշին ընդմէջէն՝ Տիրանն է որ ծաղրանքի կը

մասնով որդես անձնատրուքին, որդես արուեսագէտ, իր մեծամտութեան եւ թերեւ՝ մեծամոլութեան լուսնադար, երազներու մէջ ամրապնդու համար, ծրագիր մը մինչեւ ամառը ճանիլ չկարենալուն համար: Բայց 1905ին երբ կը գրէր *Կեղծ հանճարները*, Եսայեան լուսնուն՝ *Ներաշխարհի* գոյութեան մասին: Եւ այս կասկածն իսկ բաւական չէ՝ անմարտելի դարձնելու համար ծաղրանկարային վէրը: Գիտէր անուշտ *Ներաշխարհի* գոյութիւնը ու ազդուած ալ էր անկէ, իր «Սկիւսարի վերջալոյսներ»ը գրելու ատեն: Գիտակցաբար արդեօք: Դոս է որ «ազդեցութեան անձկութեան» մասին վերը ըսածս իր իմաստը կը ստանայ: Դարցնելը թէ այս ամբողջը գիտակցաբար եղած է թէ ոչ՝ հոգեբանական ոլորտին մէջ մնալով միտքի նշանակէ: Բնականաբար՝ յարձակումը գիտակցաբար կը կատարուէր իր կողմէ, եւ իսկական յարձակում մըն էր, անձի մը, կերպարի մը, հեղինակի մը, արուեստագէտի մը վնասելու հաստատարականով, եւ այս ամբողջը՝ հակառակ իր ուղղումներուն: Աւելի ուշ, երբ վէրը գիրքով լոյս տեսնէր, Եսայեան թեմանութեան անդին իր խանդաղակաւոր ալ արտայայտած է. «Ձիւրեմ [բոլոր այդ կեղծ հանճարները] չեն տեսներ բնաւ թեմանի աշխարհը, այլ ընդհակառակը տեսակ մը խանդակաթ հրայրով, որուն մէջ երբեմն դառնութիւն, երբեմն ցաւ ու երբեմն ալ կարօտ կայ»²⁸: Խանդակաթ հրայրը անուշտ չ'արգիլէր բնասիր/նախասիրող չեզոքացնելու միտումը եւ այդ միտումով գործարարած գրական/գրողական ռազմավարութիւնը: Երկուքը անդադար կը գոյակցին վէրին մէջ: Ահաւասիկ չարականութեամբ գրուած փոքր մը տղ եւս, ուր Տաճարն է խօսողը իր ամառայ (եւ չգրուելիք) գիրքին մասին. «Այնպիսի գիրք մը միտքի ըլլայ ասիկա որուն տէրը դեռ չէ գրուած եւ չմիտքի գրուի. անիկա կոչուած է տեղեկական դեր մը կատարելու, անիկա ամառայով միտքի փոխտ արուեստական եւ իմաստասիրական միտքի ցարդ գոյութիւն ունեցող ըմբռնումները, անիկա ամբողջ իմ Եսայեանի ըլլայ, իմ Դոգիս»²⁹: Բայց կայ հակառակ տարազան ալ, այսինքն՝ վէրին մէջ լման հաստատումներ որոնք գրուած են տարօրինակ խանդաղակաւորով մը: Անոնցմէ մէկն է այն հաստատումը ուր Տաճար իր «Գիրք»էն կտորներ կը կարդայ գրագէտ-ֆմնադար Յրանդ Մարտիկեանին, որուն նախասիրողը բացայայտէն Արեւի Զօղանեանն է³⁰: Ի դէպ առաջին անգամն է վէրին մէջ որ հեղինակը գաղափար մը կու տայ Տաճարի գրուածներուն մասին: Ու այդտեղ իր երգիծական շեշտն ամբողջովին կը հեռանայ: Այդ էջերը կարդալով անկարելի է չխորհիլ որ անձնական փորձառութիւն մըն է մասնուցածը: Զառնել Եսայեան յանկարծ իրադէպ կը խօսի Ինքնայի *Ներաշխարհի*ն մասին, կը դասէ թէ ինչ տղաութիւն կը ձգէր *Ներաշխարհը* իր առաջին ընթերցողներուն (կամ ունկնդիրներուն) վրայ, եւ թէ ինչպէս Ինքնայի իր գիրքէն կը կարդար յուզումով³¹: Կ'արժէ լման հաստատում մէջբերել: Ի վերջոյ, թէկուզ վիճակական ծղոտումով ներկայացուած, առաջին լուրջ ֆմնադարական խօսքն է Ինքնայի գիրքին մասին.

Իրաւ էր թէ խիստ դժուար էր առաջին անգամէն բան մը ըսել Տաճարին գրուածին վրայ, անիկա փափաքով շարունակէր բան մը ունէր այն գաղափարներու կուտակումին իսկ լուսնադարն որոնք գիրքը կը հրէին, իրարու կը բաղխէին եւ ընթերցողին ուշադրութիւնը կը ցրուէին, կը յոգնեցնէին ու այդ ընդհանուր մտքին ջլատման մէջ գեղեցիկ բառեր, երբեմն լուսնակներ կը յամառէին, կը մնային եւ կ'ազատէին առաջին տղաութիւնը:

Անիկա նկարագրութիւնն էր անտառի մը, մթին, վայրենի անտառի մը որուն մէջ Տաճար կը ցուցարարէր իր հոգւոյն, իր եսին զգայնութիւնները, իր ամենէն ներքին մանրամասնութիւններուն մէջ, եւ անտառը կը տեսնար մեծ իր հոգեկան վիճակին մթին, տառաւոր, մոմօղ, երբեմն արեւի բարակ ճառագայթ մը կը մխրձուէր հոն եւ կը լուսաւորէր զայն, բայց անիկա ինչպէս դիւրաբեկ էր, հազիւ թէ ցոյլ մը, վաղանցիկ եւ խուսափուկ, ու դարձեալ այլազան զգայնութիւններ, գաղափարներ, յաճախ սովորական եւ անկարելի, մեծ համեմատութիւններ առած կը խառնուէին, կը կապկոտուէին, անփակելի հանգոյցի մը տէր:

Երբեմն ալ, եւ այս էր բուն յակամեական դրոշմը իր գործին, հեղինակը կը ցայտէր գաղափարներու կապակցութեան օրէնքով իր միտքն ուրիշ, երբեմն լուսն մը կը վերադառնար երկնոստեամբ իր նախնական գաղափարին շուրջ, բայց կարծես զայն ճակատէն ու տեսնէր վախճալով, յանկարծ կը հեռանար, կը թափառէր ու դեղնէր, խախտափելով հեզհեզ կը մոլորէր իր մտքին անել ուղիներուն մէջ³²:

Ո՞ր հասնածին կ'ակնարկէ արդեօք Եսայեան ինքն: *Ներաշխարհի առաջին զլուխի՞ն եւ Սեւ ծովուն եզերը խօլարեալ ճամբորդութեան նկարագրութեամբ: Թէ երկրորդ զլուխի դէպք վերջաւորութիւնը դրուած «ժողովներու անհառ»ին նուիրուած բաժնին: «Շոճիներուն անհառը... զօս շիւղերով լործուն, անելանելի սեղութիւնները, որոնցմէ վեր ելանք ձեռք ձեռքի, մտախոհ, խռով: Հետզհետէ աւելի վեր, ժողովներու տակէն, ծիրանեմոյզ, դուրսիւրային բուններով, մինչեւ վերի ժողովներուն վայրենի տեղումները [...] Մինակ, շոճող ամայի անհառին մէջ, անկոխ թաւուսներու խօլ յոյսովը վարեւէն հեռու, հեռու, կորսուելու երկչոտ բաղձանքներով...»³³: Կամ արդեօք երկուրէն խառնուողը իր յիշողութեան մէջ: Ընթերցանութեան այս դասին մէջ կը մտնէ յանկարծ արտասովոր վերլուծում մը, նուիրուած Տաճարի խառնուածքին, ուր Եսայեան երեւան կը բերէ այդ խառնուածքին խոր իզականութիւնը, «կանաչիութիւն»ը, ինչ եւս առանց ո՛չ մէկ փնտրողի, ընդհակառակը այնպիսի խանդով ու խանդաղատամբով գրուած որ կարծես այստեղ կը գտնուի Եսայեանի յափճակութեան եւ, այո՛, թեմանութեան արմատներէն մէկը: Ահաւասիկ կտոր մը միայն այդ հասնածին:*

Տաճար կանաչի բան մը ունէր իր խառնուածքին մէջ, որ իր մտքին մասնաւոր փափկութիւն մը կու տար երբեմն, տաճարութեանց եւ որոշողութեան սկարութիւն, սեւեռեալ ուշադրութեան ժողովարարութիւն եւ ասոնց փոխարէն միայն իրենք եւ դէպքերէն արագ եւ հարեանցի տղաւորութիւն մը կրելու բնագոյնին յանդգնութիւնը, ինչ որ յաճախ թափանցողութեան ժառանգը կու տայ, այդ տղաւորութիւնը արդիւնքը ըլլալով մանրամասնութեանց որոնք յիշուածքին տվորական մտք մը ուշադրութեանը³⁴:

Ուրեմն այսպէս «կանաչի բան մը»: Եւ եթէ լուրջի առնենք այս անցողակի նկատողութիւնը, այն ասեմ լման *Ներաշխարհը* արդիւնք է «կանաչի» խառնուածքի մը, մտքի «փափկութեան» մը, որ կ'արտայայտուի «որոշողութեան սկարութեամբ», «իրենք եւ դէպքերէն արագ եւ հարեանցի տղաւորութիւն մը կրելու» յանդգնութեամբ: Առաւել եւս՝ միտք մը կը դարդի «սովորական» ըլլալէ ետք բնականօրէն է կանաչիութեամբ: Եւ ինչ որ ըսուածը Իմաստի գործին ամենէն խոր վերլուծումներէն մէկը չէ՞: Կին մը, վիճակականի ժառանգով, կ'արտայայտուի որդէն փնտրեալ գործի մը մասին: Որովհետեւ ինքն Իմաստի գործն է Եսայեանի վերլուծումին առարկան, ո՛չ թէ Տաճարի կամ Տիրան Չրաքանի բացառիկ-զարտուի խառնուածքը: Եւ այն ասեմ հասկնալի չէ՞ Եսայեանի մտաւերլուծումը, իր զգացած «նախանձ»ը, մրցակցական վերաբերումը: Այդտեղ ուղղակի իր կանաչիութիւնն է խնդրոյ առարկան, կարծես Իմաստ զայն գողցած ըլլար իրմէ, կամ աւելի ցայտուն կերպով ցուցաբերած ըլլար կանաչիութեան յատկանիւնը: Ահա՛ հեղինակ մը որ ամէն ինչ ըսած է ճիշդ ինչպէս կին մը յիշի ըսել: Հետեւաբար ասկէ անմիջապէս ետք կու գայ հասնած մը որ իր ներշնչումով ստիպողաբար կը մտնի *Ներաշխարհին* հետ, ու Ջառլէ Եսայեանի ամենագեղեցիկ էջերէն մէկն է: Տաճարը կը սկսի ինքն կարգալ իր գիրքէն:

Կարծես կը տեսնար մնայլ անհառը որ կը տեսնէր փոքրիկին տակ եւ ծառերուն գագաթները մոռնալով ծովի մը դէպք կը կոհակուէին, կը ծածանէին, կը շարժուէին, յետոյ ահաւասիկ կը մտնէին անոնք իրենց սօսաւիւնը խորութիւններուն մէջ, դուրսկներուն մէջ, ու հողը դրդողան փոքրիկէն՝ աղագայ ծիւրու ուռնացումը կ'երկնէր, զգայնութեան հազուագիշտ նրբութիւն մը կար այդ նկարագրութեան մէջ, գոյնի, ճայնի, բուրմունքներու զգայութիւնը տալով իր տեսնելու եւ հսկայ կենսականութեամբը: Բայց յանկարծ ժառանգէր ժառանգ, գաղափարէ գաղափար հեղինակը կը մոլորէր եւ իր մտածումները անժամանակ, ճղճիմ եւ տարած իրենց ընծայուած կարեւորութիւնով միտքը կը մոլորեցնէին, կը հեռացնէին, կը ցուէին: Բայց Տաճար ասոնց է որ կը կանգնէր մասնաւորապէս. անոնք իր Եսն, իր իմաստներն էին. դուրսի աշխարհը իրենց շրջանակ յիշի ծառայէր իր հոգեկան վրդովմունքներուն. անոնք չէ՞ մի որ կարեւորութիւն կը ստանային իր իսկ կրած զգայութիւններուն շնորհիւ եւ անոնց ինքն չէ՞ որ մասնաւոր դրոշմ կու տար³⁵:

Իսկ *Կեղծ համաճարներ*ին մէջ բացակայ չէ մոյմտէ գրականութեան եւ նկարչութեան մրցակցութիւնը: Հեղինակը Տաճարին ըսել կու տայ որ նկարչութիւնը եւ կը մնայ գրականութենէն որովհետեւ նկարչականութիւնը ինքն կը գերակշռէ: Այդ գաղափարը երկու անգամ արտայայտուած է, տարբեր առիթներով: Ահաւասիկ առաջինը, մաղձով եւ չարականութեամբ գրուած.



«Տաճառ փոխանակ իր անկարողութեան անդրադառնալու՝ արուեստը անբաւական կը նկատէր եւ մտին մէջ եռացող զգայութիւններու, զգացումներու, կցկտուր մտածումներու ամբողջութիւնը արձայայտելու բոլորովին անյարմար: Գիծի եւ գոյնի համադրական արժէքը կը խուսափէր իրմէ, որովհետեւ արդէն իր զգայութիւնները միութենէ զուրկ եւ անմտաբանական իրարու, համադրական արժէք մը չունէին:... Ինչ անբաւական միջոց գոյնը եւ գիծը, նիւթական եւ գրեթէ կոդիս, գաղափարին առաձգական, սլացող եւ թափանցող արժէքին փոխ»³⁶: Հոս նկարչութենէն գրականութիւն անցին համար կը տրուին երկու դաս՝ ժամանակակից, միւսը՝ հոգեբանական: Երկու դասներուն Տաճառ չի հասկնար իբրեւ թէ նկարչութեան համադրականութիւնը: Կը տեսնէ անոր մէջ միայն նիւթը, նիւթին կոդիսութիւնը: Համադրական հանգամանքը չհասկնալու դասաւանդը ալ իր մտածումներուն եւ զգայութիւններուն ցրտածութիւնն է: Երկրորդ հաստատելու որ նոյն գաղափարը կ'արձայայտուի աւելի կարճ եւ աւելի բիւրացեալ կերպով հետեւեալն է (Տաճառն է խօսողը, Բարսեղին ուղղուած մեղադրանքով մը). «անոր համար որ դուք նկարչներդ գաղափարական մարդիկ չէք, դուք չէք հասկնար գաղափարին ամենակարողութիւնը. ինչ որ ես իմ հոգիս խորը կը զգամ վստահ եւ հզօր, դուն ինչպէ՞ս կրնաս սահմանել քո թանձր գոյներովդ եւ չոր գիծերովդ, քո տաղանդդ որոշեալ գիծերու եւ երանգներու գերին է...»³⁷: Թանձր, չոր. հոս ալ նորէն Տաճառ կ'անտեսէ համադրականը նկարչութեան մէջ: Տարօրինակը այն է, որ այստեղ Չապէլ Եսայեան ամբողջովին կը սխալի, եթէ կը կարծէ որ արձայայտած գաղափարը Տիրան Չապէանին մտածածը կը ցոյցանէ: Բուն Տիրան Չապէանը, այսինքն իրական անձը եւ ո՛չ թէ Եսայեանի վերին ծաղրանկարը, ո՛չ միայն գիծեր թէ ինչ է նկարչութեան համադրականութիւնը, այլեւ կ'ողբար գրականութեան հաշտոյնը, որ չունի համադրական ըլլալու նոյն կարողութիւնը: Կ'ըսէր ուրեմն Տաճառի ըսածին ճիշդ հակառակը: Եսայեանին երկու բացատրութիւններն ալ հետեւաբար սխալ են, եթէ հարցը կը վերաբերի Չապէան-Ինճրային: Այս նիւթին շուրջ Չապէան խօսած է ի հարկէ 1906ին գրուած «Ներաւախիւր իր հեղինակէն դիտուած» երկար ինքնախնդրանքական մէջ: Ահաւասիկ հաստատելու յաղաւտմանը.

Բայց թէ գրականութիւնը կրնայ մըջիկ նկարչութեան հետ. այդ բանին անհնարութիւնը շատերէ աւելի լաւ գիտնալու է Ինճրա: Պէտք է հաւատալ միայն որ Գրականութիւնը Գեղարուեստից մէկ վերացեալ խառնուրդն է: Ո՛չ բուն գոյնն ու ձեւը, ո՛չ բուն ձայնը կրնայ լաւ. բայց կը մնան այն անգոյնն եւ անձայնն եւ անձեւն ելեկտրական հոսանքին որ աշխարհ մէջ գոյն ու ձեւ, ականջին մէջ ձայն կը բերէ...: Ո՛ր Գրականութիւնը լիարժէք կրնար երբեք Նկարչութեան synoptique անմիջականութեան հասնիլ...: Ուստի Ինճրա միտէն չ'անցնէր թէ իր նկարագրութիւնը կրնան նկարներ արժէք, զի ամենէն նկարչական գրականութիւնն ալ դասադասուած է Գրականութիւն մնալու...»³⁸

Հոս իր synoptique բառով Չապէան կ'արձայայտէ ճիշդ ու ճիշդ ինչ որ վերը Չապէլ Եսայեանը «համադրական» կը կոչէր եւ մենք ալ իրեն հետ: Եւ բնաւ արգիլուած չէ խորհիլ որ Չապէան հոս ուղղակի Եսայեանին դէմ կը խօսի, անոր կը դասասխանէ (թէեւ երբեմն Եսայեանի անունը չի տար բնականաբար), սրբագրելով Տաճառի կերպարին ընդմէջէն իրեն վերագրուածը: Արգիլուած չէ, բայց կը խոստովանի որ զուտ ենթադրութիւն մըն է: Կը մնայ ինչ որ գրուած է: Իսկ գրուածը յստակ է. գրականութիւնը չի կրնար մըջիկ նկարչութեան հետ եթէ խօսքը վերաբերի համադրականութեան, համադասակերպութեան: Ուրիշ առիթի կը ձգեն ասոր ետեւը կանգնած տեսաբանութիւնը, լեզուի միջոցաւ խորհրդանշականացումի գործողութեան նկարագրութիւնը, ինչպէս որ ենթադրուած է ան Ինճրային կողմէ: Անգամ մը եւս՝ հոս կարելի է մըջակցութիւնն է: Յայտնի է որ երբ Չապէլ Եսայեան Տաճառին (եւ Տաճառին ընդմէջէն՝ Տիրանին) ենթադրեալ արհամարհանք մը կը վերագրէ նկարչութեան նկատմամբ, կամ իր մէջ համադրականութեան զգացողութեան բացակայութիւնը ծաղր ու ծանակի կ'ենթարկէ, չարաչար բայց հաւանաբար կամովին սխալելով Չապէանի բուն մտածածներուն մասին, դաս մը ունի դաստիարակութիւն: Կարծէ՞ք նկարչութեան դասն է որ կը դաստիարակէ Տաճառ/Տիրանի արհամարհանքին դէմ: Եւ այդ դասը փիլիսոփայական չէ: Արուեստի էութեան մասին վերջ մը չէ հրաճուածը: Եւ զուր տեղը չէ որ Չապէան «մըջիկ» բառը կը գործածէ: Բայց ինքն այդ մըջունի փիլիսոփայական երեսը կը շօշափէ միայն, բացատրելով թէ իր մէջ արհամարհանք չկայ նկարչութեան հանդէպ, քան ինչ: Իսկ թուականները լիարժէք չէ Եսայեանին ընթերցողը: Գիշտ է

որ Կեղծ հանձարներ որդես գիրք լոյս տեսած է 1909ին կամ ամենէն ուրիշ՝ 1910ին, բայց ենթադրեալ արհամարհանքը արձանագրուած է վերջին առաջին էջերուն մէջ, *Արեւելեան Սամուի* տարբերակով, 1905ին: Չրաբեանը չէր կրնար հասկցած չըլլալ թէ հարցը իրեն կը վերաբերէր էադէս:

Վերջին նկատողութիւններս (ենթադրեալ արհամարհանքի մասին, որուն դէմ ղէտք է անդաման մաշտադանել նկարչութիւնը) ցոյց կու տան, որ մրցակցութեան միջեւ ինքն վերակազմուած (եւ արդէն իսկ բաւական բարդ) տրամաբանութիւնը չի նկարագրեր ու չի բացատրեր այդ նոյն մրցակցութեան դաշտին լծան իրողութիւնը: Տարր մը եւս կը ղակսի, զոր ղէտք է հիմա նկատի առնել: Ըսինք թէ Չադէլ Եսայեան նկարչութիւնը փոխադասական մաշտադաներով չէ որ կը մաշտանէ: Ուրեմն ղէտք է ըլլայ «անձնական» մաշտադաներով: *Կեղծ հանձարներ* վերջին մէջ ի հարկէ կայ դրական կերպար մը, Բարսեղը, ինքն ալ նկարիչ, համեստ (նկարագրային ինչդէս դասակարգային առումով), կոռովի, բարեսրտեամբ վարուող, ինչո՞ւ չէ՝ նաեւ տաղանդաւոր, աշխատանակ, որ վերջին հաշուով՝ կը յաջողի իր աստարեգին մէջ, ցուցահանդէսի կը հրաւիրուի, կը հասնի, կը հաստատուի: «Կեղծ հանձար»ի կերպարին ճիշդ հակադասներն է: Անոր հետ շփուելով է որ Տաճարը հոգեմէս կ'ընկճուի, իր սին ու սնանկ յոխորտութիւնը մերթ կը ցնդի: Եւ հետեւաբար ստիպուած ենք հարց տալու մենք մեզի. հաղա՞նք ինչ որ կը մղէր մեզ միջեւ հիմա՞՝ հիմնովին անբաւարար ըլլար, հաղա՞նք թէ *Կեղծ Հանձարներ* վերջին բուն միտումն ու մտաւորութիւնը չըլլար գրական նախաշիջող չեզոքացնել (կամ այդ ըլլար միայն որդես երկրորդական ու կողմնակի արդիւնք), այլ ուրիշ տես տարբեր բան մը: Ըլլար ան մահացու յարձակում մը ո՛չ թէ իր՝ Չադէլի անունին հաշուոյն, այլ իր ամուսինին՝ Տիգրանին հաշուոյն, զոր դիրքեամբ կարելի է երեւակայել Բարսեղի դիմակին ետին: Բարսեղը յաջողած նկարիչն է, իր տնայնոք տեղ հասած, առանց յոխորտութեան դոյզն իսկ նոյնի: Տիգրանը, Չադէլին ամուսինը: Ինքն ալ նկարիչ, ենթադրեմք նաեւ՝ հեղ, համեստ, բոլոր յոխորտումներէն սոսկացող, լուրջ, ինքն իր մէջ տաշտած, բարեսիրտ, հոգարտ, ուսումնասէն: Ի վերջոյ՝ ինչ որ գիտենք Տիգրան Եսայեանի մասին կը համադասասխանէ այդ մասերին (մէկ տարբերութեամբ անուրձն՝ որ է յաջողութիւնը, յաջողութիւն մը որ երբեք չէ ժողով Տիգրան Եսայեանին, միշտ խուսափած է իրմէ, որն էր հաւանաբար ամբողջ հարցը, միջեւ իր տաշտելի մահը, Փարիզի մէջ, 1921ին, թոքախտ, մահ մը որ նոյնդէս նախորոշուած էր *Կեղծ հանձարներ* վերջին մէջ Սամուիի հոգեվարքին երկարաբան, չափազանց յուզիչ, չափազանց իրադատ եւ չափազանց վարդէս նկարագրութեամբ): Եւ եթէ ճշմարտութեան հետք մը կայ սոյն ենթադրութեան մէջ, Տիգրան Չրաբեանի դէմ ուղղուած յարձակումը լայնօրէն գերորոշադրուած հանգամանք միշտ ունենայ, ինչդէս ըսի՝ աւելի բարդ քան ինչ որ կրցանք կռախել միջեւ հիմա: Որովհետեւ միջեւ հիմա ամուսինը նկատի չէինք առած ընդհանուր մասերին մէջ: Ի դէպ՝ ամուսինը ներկայ է «Վերջալոյսներ»ին մէջ, «բարեկամ»ին կերպարով, նոյնդէս՝ նկարիչ, հմուտ, ներամտով, մատուցական ձգտումներով, գեղագիտական յսակ ըմբռնումներով: Մրցակցութիւնը այն ասեւ կը տեղափոխուի, կը մակարդակուի, կը դադրի ըլլալէ Չադէլին եւ Տիգրան Չրաբեանին միջեւ մահացու մենամարտ մը: Երրորդ դէմք մը կը մտնէ իրադատակ, «բարեկամ», «ամուսին», ամէն մարդային՝ այդ մարդ ու նկարիչ: Մրցադաշտին յասակագիծը կը փոխուի:

4 Ամուսնական մրցադաշտը

Բարեկամ: Ամուսին: Ո՞ր է մրցադաշտը: Որո՞նց միջեւ է այդ մրցումը, որուն գրաւարկը գոյութեան իրաւունքն է, կենաց ու մահու հարց մը, որո՞նց միջեւ արդեօք կը մղուի էական եւ էաբանական այդ կռիւը: Եւ յանուն ինչի՞: Յանուն բանաստեղծութեամբ արդեօք, գրող կնոջ մը եւ գրող այր մարդո՞ւ մը միջեւ, մարդու մը որ այնքան մօտիկ է, մանկութենէն ծանօթ, որուն արտասանելուն կը հիանար գրագիտիին երբ ղղձիկ էր, որուն արտասանութենէն իսկ թերեւս ծնած է իր մէջ գրող ըլլալու ցանկութիւնը, ո՞վ գիտէ: Կամ յանուն նկարչութեամբ արդեօք, գիտնալով որ նկարչութիւնն ինք՝ չի կրնար «գրել» ու մասնել մրցակցութիւնը: Եւ ուրեմն գրող կնոջ մը եւ նկարիչ այր մարդո՞ւ մը միջեւ, գրառումով մը որ կը փոխադրէ մրցակցութիւնը ամբողջովին այլ մակարդակի վրայ, ջնջելով կամ ծածկելով «ազդեցութեան անձկութիւնը»: Կամ աւելի ուղղակի (եւ աւելի դասական) կերպով՝ երկու այրերո՞ւ միջեւ արդեօք, երկուքն ալ նկա-



րիչ, որոնք կը մրցին կնոջ մը գրականութեան տարածքէն ներս, փոխադրիչ հակակրօններէ մը տարածք, կնոջ կողմէ արձանագրուած եւ արձագանգուած: Որ մէկն է ճիշդը: Բոլորը, մականորուած ու մականորակուած, այնպիսի ձեւով որ մէկը միւսին դիմաձայն է: Բայց այն ասեմ ինչպէս լիարժեք հասկնամք մրցակցական կասկածներէն չորրորդ երեսակը, այս անգամ կնոջ եւ ամուսնոյն միջեւ մրցակցութիւնը, երկուքն ալ նկարիչ: Նախորդ երեսակները իրական մրցակցութեան մը զանազանութեան տեսակներն էին: Բայց այն մէկը որուն մասին լիարժեք խօսիմք հիմա առաջին ակնարկով՝ բեմադրուած մրցակցութիւն մըն է, բեմադրուած Ջաթէլ Եսայեանին իսկ կողմէ նորավէտով (կամ լիարժեքով) մը, որ լոյս տեսած է *Ճաթէլ* շաբաթաթերթին մէջ, 1903ին (թիւ 24), եւ շատ բնականօրէն՝ կը կրէ «Մրցումը» վերնագիրը: Կը կրկնենք՝ լոյս տեսած է 1903ին, այսինքն՝ «Վերջալոյսներ»-էն եւ *Կեղծ համաձայնեցի* թերթին մէջ հրատարակութենէն երկու տարի առաջ: Եւ քանի որ Եսայեան օրը օրին կը գրէր, ուրիշ է ենթադրել որ գրուած է նաեւ ամուսնոյն երկու տարի առաջ, «արուեստագէտ ամուսնին» Պոլիս հասած օրերուն:

